

ԿԱՐԾԻՔ

**ՄԱՐԻ ԵՂԻԱՅԻ ՂԱԶԱՐԵԱՆԻ «ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**

ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

**ԺԹ.00.03 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

Հասարակական կյանքի ներգրավմանը կրթության ոլորտում ժամանակի ընթացքում նպաստավոր պայմաններ է ստեղծում բազմաթիվ կարծրատիպերի ձևավորման համար: Մի կողմից դպրոցը ձգտում է առաջադեմ գաղափարների, նորի ներդրմանը, մյուս կողմից՝ ուսուցման, դաստիարակության գործընթացը որոշ դեպքերում հանդիսանում է հանդուրժողականության կոմֆորմիզմի, հաշտվողականության, միջավայր, որում նշանակալի դեր են խաղում ուսուցիչների անձնային հատկանիշները, դպրոցի ավանդույթները, փորձարկված էթիկետի, վարքի ձևերը: Կրթության ոլորտում ներդրվող տեխնիկական միջոցների, ծրագրերի բովանդակության ու դասավանդման մեթոդների փոփոխություններն ու ժամանակակից զարգացումները սովորողների և սովորեցնողների միջև առաջացնում են տեսանելի ու միջնորդավորված, հակասություններ, քողարկված սրամադրություններ ու դիրքորոշումներ: Դեռ ավելին, ժամանակի ընթացքում ուսուցիչների անհատական վարքագծում, սովորողների հետ կառուցվող հարաբերություններում ձևավորվում են խնդիրներ, որոնց հավանական զարգացումների կանխատեսումներն ու լուծումները դժվարացնում են առաջնահերթ խնդիրների լուծման գործընթացը: Վերջին տասնամյակներում կրթական ոլորտում բարեփոխումների անվան տակ հաճախ չտեղայնացված տեխնոլոգիաների ու մեթոդաբանական փաթեթների ներդրումը հանգեցրեց կրթության ոլորտում բազմաթիվ հակասությունների: Կրթական ոլորտում արված բազմաթիվ հետազոտություններ վկայում են կրթական միջավայրում դիտարկվող հուզական կապերի աստիճանական թուլացման, առանձին դեպքերում նաև դրանց մարող գործընթացների, անձի միայնակության, հոգեբանական օտարացման (դեպրիվացիա) երևույթների առաջացման մասին:

Աշխատության բովանդակությունը բացահայտում է հուզական ինտելեկտի, էմպատիկ կարողությունների և սոցիալական վերաբերմունքների փոխկապակցվածությունը մանկավարժական միջավայրում: Հետազոտության գաղափարական հիմքում ընկած է հումանիստական մտածողությունը՝ մարդու ներաշխարհը, հուզական ինքնագիտակցությունը և բարոյահոգեբանական պատասխանատվությունը դիտարկելով որպես մասնագիտական գործունեության կենտրոնական արժեքներ: Այս իմաստով հուզական ինտելեկտը մեկնաբանվում է ոչ միայն հոգեբանական հմտությունների ամբողջություն, այլև բարոյահոգեբանական հասունության և արժեքային գիտակցության ցուցանիշ: Բացի այդ, աշխատանքը ենթադրում է սոցիալական կառուցվածքայնության և մշակութային բազմազանության փոփոխություն. այն փաստում է, որ կարծրատիպերը և հանդուրժողականության ձևերը պայմանավորված են տվյալ համայնքի մշակութային, պատմական և սոցիալական առանձնահատկություններով: Այս մոտեցումը հատկապես կարևոր է լիբանանահայ միջավայրի ուսումնասիրության մեջ, որտեղ կրթական արժեքները միահյուսված են ինքնության պահպանման և համայնքային համերաշխության գաղափարների հետ:

Այս իմաստով աշխատանքում հանդիպում ենք փոփոխական շեշտադրումների՝ տեսնելով, որ ուսումնասիրվող երևույթներն ունեն ոչ միայն հոգեբանական, այլև էթիկական և արժեքային խորություն, ինչն ուժեղացնում է աշխատանքի գիտական ամբողջականությունը և ներդաշնակությունը ժամանակակից կրթության փոփոխության մոտեցումների հետ:

Այս տեսանկյունից Մարի Ղազարեանի «Հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը մանկավարժական կոլեկտիվում» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեզը գիտական հետաքրքրություն է ներկայացնում և պահանջված հետազոտություն է:

Ատենախոսությունը լիբանանյան հայ իրականության մեջ առաջին աշխատանքն է, որն ուսումնասիրում է մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը: Աշխատանքում վեր են

հանվել սոցիալական կարծրատիպերի և հուզական ինտելեկտի համահարաբերակցությունն ու փոխկապվածությունը, ինչպես նաև արձանագրվել և բացատրվել են հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածության ազդեցության ներքո սոցիալական կարծրատիպերի նվազ դրսևորումները:

Ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ մանկավարժների մոտ հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածությունն ազդում է սոցիալական կարծրատիպերի թույլ դրսևորման վրա: Երկար դասավանդած և մեծ փորձ ունեցող ուսուցիչներն ունեն ամենաքիչ հանդուրժողականությունը մյուսների նկատմամբ և ամենացածր կարեկցանքի մակարդակը: Հետևաբար, այն ուսուցիչները, ովքեր աչքի են ընկնում ամենացածր սոցիալական հմտություններով, ցույց են տալիս ամենացածր հանդուրժողականությունն այլոց նկատմամբ՝ կախված սեռից, մասնագիտությունից կամ տարիքից:

Ատենախոսության դրական կողմերին և արժանիքներին անդրադառնալուց հետո, նշենք նաև որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները.

1. Ատենախոսության գրավոր խոսքն առանձին ձևակերպումներում խորթին է: Որոշ մտքեր քողարկված են մասնագիտական տերմիններով, որոնք պատշաճ կերպով չեն արտացոլում այդ դատողությունների բովանդակությունն ու էությունը: Ուստի, նպատակահարմար է ավելի պարզ ու միանշանակ ներկայացնել այն:

2. Աշխատանքն առավել շահեկան կլիներ, եթե հեղինակը բացահայտեր և մանրամասն ներկայացներ այն սոցիալական կարծրատիպերը, որոնք տիրապետում են լիբանանահայերի շրջանում:

3. Ատենախոսության մեջ հղումները պատշաճ են, բայց ցանկալի է հղումների մեջ հստակ նշել այն էջերը, որտեղից մեջբերումները վերցված են:

4. Աշխատանքը կշահեր, եթե հավաքագրված արդյունքները համեմատվեին ստուգիչ խմբի տվյալների հետ:

Նշված թերություններն, անշուշտ, չեն ազդում ատենախոսության գիտական որակի վրա: Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն, գիտական նորույթ պարունակող

հետագոտություն է: Այն իր բովանդակությամբ և և ձևակերպումներով համապատասխանում է ԲԳԿԳ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Մարի Եղիայի Ղազարեանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Սեդրակյան

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս. Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ՝

գիտ. քարտուղար, ԲԺ.Գ.Դ.



Handwritten signature in blue ink.

Ժ. Բաբայան